ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄԵՋ ԳՅՈՒՂԻ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

N Ե-95

Հասցե՝ գ. Անտառամեջ
Հեռ. +374 94 01-83-83
E-mail antaramedj.dpr@gmail.com
15 ապրիլի 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ « Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում «Մաթեմատիկա» առարկայի՝ տասը, «Ֆիզիկա» առարկայի՝ յոթ դասաժամի ուսուցչի թափուր տեղերի համար հայտարարությունը հրապարակվել է «Գեղամա աշխարհ» թերթում՝ 2019 թվականի ապրիլի 8-ին:
Ուսուցիչների թափուր տեղերը համալրելու համար մրցույթը տեղի կունենա 2019 թվականի մայիսի 17-ին. «Մաթեմատիկա» առարկայի համար՝ ժամը 11:00-ին, «Ֆիզիկա» առարկայի համար ժամը 14:00-ին Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոցում:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը :
Առդիր մեկ էջ:

Տնօրեն Ա. Ազարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մաթեմատիկայի (10 դասաժամ), ֆիզիկայի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. դիմում՝ (Ձև 1),
2. բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)
3. անձնագիր,
4. աշխատանքային գրքույկ,
5. ինքնակենսագրություն (Ձև 4),
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր, (դրանց առկայության դեպքում),
10. որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2019 թվականի **մայիսի 10-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը , բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան 2019 թվականի **մայիսի 17-ին.** «Մաթեմատիկա» առարկայի համար՝ ժամը 11:00-ին, « Ֆիզիկա» առարկայի համար ժամը 14:00-ին Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-01-83-83 հեռախոսահամարով: